

ՄԷՐ ՄԱՐԴԱՆԱԹԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

— ԹԵՐԹՐԱՆ ԴԱՆՆԻՐԱՆ —

ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Երբ մէկն իր ուշադրութիւնը չը շարունակ տեղի ունենալու վրայ եղած մանրամասն իրողութեանց զննութեամբն ու գնահատութեամբն անցնէ, չկրնար կամ ժամանակ չունենար տեսնելու և նշմարելու աւելի բարձր տեղեր անցած այն մեծամեծ դէպքերն իրողութիւններն, որքան միջակայն աղքատութիւն ունին ստորին և ամենօրեայ պատահած դէպքերուն վրայ:

Այսպէս ալ մեր հասնապաշտօնայ հեռագրական տեղեկութեանց և ներկայ կացութեանը վերաբերեալ մանրամասն իրաց վրայ մտք և ուշադրութիւն զոհեցնելու ծածկած է գրութիւն մեր տեսութեանէն այն մեծ և ընդարձակ փոփոխութիւնն ու յեղաշրջումը որ կատարուելու վրայ կ'զտնուի եւրոպական տէրութեանց իրարու հետ ունեցած յարաբերութեանցն ու բնդհանուր քաղաքականութեանը մէջ:

Այս քաղաքականութիւնն ըլլալով մեր ամեն օր տեսած ու զգացած դէպքերուն և իրողութեանց առաջին ուղղիչն ու հեղինակութիւնն, այս վերջնոց ընթացքին մէջ երբեք մեր նշմարել կարծած հակասականութիւնն ու անբացատրելի կետերը իսկայն կրնան պարզուիլ ու մեկնուիլ երբ թողլով պահ մը վարի դէպքերը՝ ուշադրութիւնն զանոնք շարժող վերին քաղաքականութեան ուղղութեանն ու ընթացքին վրայ դարձնենք:

Եւրոպական տէրութեանց քաղաքականութեանը մէջ մեծ և բնդհանուր յեղաշրջում ու փոփոխութիւն մը կ'պատրաստուի, բնեք, եթէ ներքին է կատարուած դէպքերէն հետեւեցնել զայդ, և որ լուրջ ուշա-

դրութեան մ'արժանի է:

Կայսրէյնի մէջ տեղի ունեցած երեք կայսերաց տեսակցութենէն յետոյ, եռեակ դաշնակցութեան պաշտօնն լրացած և սորա տեղ՝ Գերմանիոյ և Աւստրիոյ մէջ նոր հաստատուած դաշնակցութիւնն անցած կերելի, Ռուսիա առկէ դուրս ձգուելով:

Ռուսիա թերևս նոր իմացած կ'թուի թէ՛ այդ եռեակ դաշնակցութեանը, զոր յղացեր էր գերմ. կայսրութեան քարտուղար մեծ քաղաքագէտն Պիզմարք իշխանը, բուն նպատակն էր Ռուսիոյ արեւելից քաղաքականութիւնը ջատագովելով, անջատել Ռուսիան Գաղղիայէն, այս վերջինը մինակ և հետեւաբար տկար պահելու համար:

Պիզմարք Ռուսիոյ աղքատ քաղաքականութիւնը շոյելու այնպիսի վարպետ ճանաչ մը բռնած էր, որ Ռուսիա իր Արեւելեան քաղաքականութեանը նպատակին հասնիլ կարծած պահուն, իրօք այնքան մեծ բան մը շահած պիտի չբլլար: Այս կերպիւ Պիզմարք դուրսէր զՌուսիա ներկայ Արեւելեան պատերազմին ձեռնարկելու, առկէ ստանալիք մեծամեծ օգուտներէն շահնելով նորա արքայ և հիմայ որ պատերազմն վերջացած ըլլալով, ամեն ոք իր ինչքան բան շահած ըլլալը կրնայ կատարեալ պաշարիւնութեամբ հաշուելու գիտնալ, կը տեսնուի թէ Ռուսիոյ ալ առկէ շահածը կարգէր արդեօք իր բրած այնքան ահագին զոհողութեանցը:

Ռուսիա արդարեւ ներկայ պատերազմն սկսելով՝ մահացու և ահարկու տապարի հարուած մը տուաւ Թուրքիոյ արմատին, և այն աստիճան ուժգնութեամբ սարսեց դառն իր տեղէն՝ որ շատ

տարիներ և դժուարաւ այս վերջինը պիտի կարենայ խելք գրելու բերել: Ներկայ պատերազմին աղէտքն անհաշուելի եղաւ Թուրքիոյ համար, ասի չուրացուիլ, իսկ առկէ ինչ շահեցաւ Ռուսիա, որ արժէր իր բրած այնքան ահագին զոհողութիւններն, բաց ի զինուորապէս և զբաժապէս տկարանալէն:

Դէպքերն, զոր կ'տեսնենք այսօր, բաւական են ցոյց տալ թէ՛ Ռուսիա իր Արեւելեան շահուն համար աշխատիլ կարծած ատեն՝ բուն իսկ գերմ. կայսրութեան քարտուղարին նախագծած քաղաքականութեանը շահուն համար աշխատել է:

Քօկերէի պահուն, երբ ամեն մարդ տեսնելով իւրաքանչիւր տէրութեան մէկ մէկ բան կ'ըզել թուրքէն, և Գերմանիոյ մինակ այս գործէն անվաստակ դուրս ելնելը, զարմանօք կը հարցնէր իրարու թէ՛ ինչ կըրնայ ըլլալ Գերմանիոյ շահը, որ այսպէս պատշաճաբար բարեկամութեամբ մ'ամեն տէրութեան իր բաժինն առնելուն լաւատար բեր հանդիսատես կենար, առանց իրեն համար բան մ'ալ պահանջելու, և թէ կարելի՞ բան էր որ Գերմանիան այս աստիճան անշահասէր և անձնուէր իրն և համառաւութեան նկրտմանց ջատագով կանգնի, որմէ շահ մը չունենալէն ետքը վնաս ալ ունի և թէ այս ամեն զուգախառնութիւններէն ինչ օգուտ կ'ամշահ կապաէր իրեն Գերմանիա, այսպէս ամենուն ալ կ'առնէր անիւր ձրիաբար իւր տեղէն վերջը:

Մարդ կ'շուարէր անցեալ տարի որոշ պատասխան մը տալ այս հարցման, երբ այժմ ամեն աչք ունեցող կ'տեսնէ թէ Գերմանիա—առ Ռուսիա իւր ցուցած այնքան բարեկամութեան հակառակ— զասի բազմամիտ

պատերազմի մը մէջ մղելէն եւ զինուորապէս ունիւթապէս տրակարացնելէն ետքը, երբ զասի Անգղիոյ հետ ալ գոտեցնելու փորձերուն դեռ կանխահաս ըլլալը զգաց, զՌուսիա ևս առաւել տկարացնելու միջոցներն կը խորհի անդադար, և առիթ չը փախցնէր իւր այս նպատակին հասնելու համար, այնպէս որ Առիթըրստի մէջ ծագած հիւսանդութիւնը նախ Գերմանիա առիթ բռնելով ու զանի չափէն աւելի մեծցնելով, այնպիսի՝ ըզգուշութեան միջոցներ ձեռք առաւ, որոյ արդիւնքը պիտի ըլլար Ռուսիան նեղ շրջանակի մը մէջ առնելով ամեն կողմէն, գիտնալով որ միւս տէրութիւնք ալ իրեն պիտի հետեւէին, բոլորովին կողիացնել ու հաղորդակցութիւնը խզել, որոյ երեսէն Ռուսաստանի վաճառականութեան ալ ո՞ր աստիճան վնասուեն թարկուիլը բացատրութեան կարօտ չէ:

Միևնոյն պահուն թրաւ կայի դաշնագրին նոր յօդուածին ջնջմանը փոխարէն, որով Շլէզվիկը վերջնապէս Բուրսիոյ կ'իջողէր, Աւստրիոյ հետեւեալ դաշնակցութիւն մը կ'էջէր, հիմայ ալ Ռուսիան թողլով՝ Աւստրիոյ արեւելեան քաղաքականութիւնը ջատագովելով, որպէսզի սա անգամ մը Միթրօվիցայի երկաթուղոյն գլուխը ձեռք անցնելէն ետքը, Գերմանիա Աւստրիոյ ճանքով Սէլանիկի նաւահանգիստէն սկսեալ Միջերկրական ծովը մինչև Սիւվէիշ և Հնդկաստան ազատ ճանաչ մը ունենայ իր առջևը, միանգամայն իր վաճառականութեան և զինուորական զօրութեանը ասպարէզ մ'ընելով զայդ:

Պիզմարքի այս անյողդողդէ և հեռատես քաղաքականութեան սյն արդիւնքը տեսնելու սկսելէն և զգացուելէն յետոյ, կարծեմք թէ այլ ևս անհաս-

կանայի և հակասական երևու-
յուն չէ այն մտաւարութիւնը՝
որ երթալով կ'ընչտուի և կ'ի-
րականանայ Ռուսիոյ և Անգլի-
ոյ միջիւրէն, զի Ռուսիա ինքը
զինքը Գերմանիոյ ձեռքը խա-
ղալիք մը դարձած սեպտեմբ-
րական տարակոյս չկայ թէ
այդ դիտումն հակակշռելու հա-
մար՝ պիտի պարտաւորէր իր
երբեմն անհաշտ ինչնամայն՝
Անգլիոյ մտածելու և շահեր-
նին իրարու հետ համաձայնե-
ցնելու, յորմէ յառաջ պիտի
դար նաևս, աւստրո-գերմա-
նական նոր դաշնակցութեանը
դէմ՝ անկողն — ռուսական նոր
դաշնակցութիւնը:

Ահա այս դաշնակցութեան
հետեանքն է, որ Շուարցի-
ուզեմբուրգեան ծնունդ կ'առ-
նէր, և այժմ ալ իսկզբունէ
անոր ռուսական քաղաքակա-
նութիւնը ի դերեւ հանելու
պաշտօն ունեցող Սեր Լէյպտ-
նի-Պոլսէն ետ կ'կանչուի, թերեւ
տեղն ուրիշ մէկը զրկելու կամ
իրեն նոր կերպ հրահանգ մը
տրուելու համար, երբ ինքն
պուրկի արքունեաց մօտ նոր
դեսպան կանուանի Անգլիոյ
Բորէ պաշտօնէութեան ձեռքը՝
հաշի կուսակցութեան անդամ
Կոնստանտին Գրիգորի և աշ-
խարհ զիտէ թէ այդ (հուրկ) ա-
ղապական ըսուած կուսակցու-
թեան անդամներն, որոց զըլ-
խաւորներն էին—ինչպէս յայտ-
նիէ—լիւթաբոլքն, Պրայս, Ֆոս-
թըր, Կրանվիլ, Հարթ ինկլիքն, և
այլք, Անգլիոյ խորհրդարանացը
մէջ, ներկայ պատերազմի պա-
հուն, ինչ մեծ օգնութիւն, ջա-
տագործութիւն եւ ծառայու-
թիւն մատուցին Ռուսիոյ, եւ
ահա այս կուսակցութեանն որ
այսօր դեսպան մը կը զրկուի
Ռուսական արքունեաց մօտ, ու-
րոյ նշանակութիւնը բացառ-
ութեան չկարծարի:

Պէտք է ասոնց վրայ յա-
ւելուլ նաևս Արևելեան—Րուսի-
այի անգղ. Գոմիսէրին՝ Պուրկա-
րաց հաճոյքն ու նկրտումը շո-
յելու իմաստիւ թրնովայի մէջ
ըրած վերջին յայտարարութիւն-
ներն, որք առանց նշանակու-
թեան չեն հարկու, և որք Սա-
լիգայի նախորդ այն հաշակա-
ւոր շրջաբերականին գրեթէ հա-
կասութիւնը կ'համարուին, եթէ
չնկատենք որ Անգլիոյ և Ռու-
սիոյ քաղաքականութեանը մէջ
մեծ փոփոխութիւն և յեղա-
շրջում մը յառաջ եկած է:

Այս ընդհանուր քաղաքա-
կանութեան վրայ այսպէս հա-
կիրճ ակնարկ մը ձգելէն յե-
տոյ, ներկայ կացութեան մաս-
նաւոր դէպքերուն մէջ իրրնո-
րացոյն պարագայ՝ մէկ մը նու-
պար բաշայի՝ իրեւ տրտք, գոր-
ծոց պաշտօնեայ՝ եզրկատական
մառաւարութեան մէջ վերստին
կտած ըլլալու լուրը կայ, թէ:

Ֆիք բաշայի գահերէցութեանը
ներքեւ:

Երկրորդն ալ անգղ. խոր-
հրդարանին մէջ Պ. Պուրքի բ-
րած յայտարարութիւնն է, և
Դրան բրած առաջարկութեանը
վրայ՝ յանձնաժողովոյ անդամ-
ներ ընտրելու մասին, որ մաս-
նաւոր ուշադրութեան արժա-
նի է:

Ասիէ առաջ անգղ. կառու-
վարութիւնը Սեր Լոյթմոլթի
բերանօք ծանուցեր էր խորհր-
դարանին թէ՝ Դրան ուղած գո-
միսէրներուն ընտրութիւնը խոր-
հրդարանին կամքն առնուելիք
խնդրոց կարգէն չէր, իսկ այժմ
կըսէ թէ՝ այդ ընտրութեանը
մասին Անգլիոյ բանակցութեան
մէջ է Դալդիոյ հետ, և ինչ ձևով
առնուելիք միջոցներն խորհր-
դարանին պիտի հաղորդուին:

Այս երկրորդ և վերջին յայ-
տարարութիւնը ենթադրել կը
տայ թէ՝ օսմ. ելմտական այս
վերջին գործողութեանը մէջ
Անգլիա, ինչպէս նաև Գաղղիա,
Թոքվիլի ծրագրին տրամադրա-
ծէն աւելի ուղղակի և ազդու
միջամտութիւն մը ունենալու
կոչուած են, անոր համար որ
Անգլիա այդ մասին ձեռք առ-
նուելիք միջոցներ՝ խորհրդարա-
նին հաղորդելով կամքն առնե-
լու աստիճանականութիւն և իրա-
կան գտեր է:

Այս միակ պարագայն բա-
ւական է օսմ. արժէտեարց սըր-
տերը քիչ մ'աւելի յուսով լե-
ցնելու:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Մասիս հետեւեալ զարմա-
նալի դէպքը կ'պատմէ:

Պէշիկի թաւաբնակ Յոյն բա-
րեկամ մը հետեւեալ իրողու-
թիւնը պատմեց մեզ, յորմէ կը
տեսնուի թէ Յունաց բարձրաս-
տիճան կղերին մէջ իսկ կ'ըլտ-
նուին տղէտ միջնաւորներ, որք
Հայաստանեայց եկեղեցւոյ պա-
տմութեանն ու վարդապետու-
թեանց վրայ յիմարական ան-
հիճեթ գաղափարներ կ'տածեն
և առանց ամաշխելու յոյն ժողո-
վըրդեան առջև կ'քարոզեն:

Վերջին առաջաւորաց բարե-
կենդանին կիրակի օրը Պէշիկ-
ի աշի Յունաց եկեղեցին հիւր
եպիսկոպոս մը քարոզ խօսելով
նոյն շարժումն Յունաց շարու-
նակ ուտիք անցունելուն պատ-
ճառն հետեւեալ կերպիւ բա-
ցատրեր է:

«Հայոց կաթողիկոսը կամ
արքեպիսկոպոսը շուն մ'ունի
եղեր, կորուսեր է, և գտնուել
համար շարժմ մը պահք դրեր
է Հայոց վրայ, այն մարդկան
պահքն որ Արցիկի լոյսի (առա-
ջաւորաց) կ'կոչուի, և զոր յու-
նական Օրթոտոքս եկեղեցին

դատապարտելով՝ այն շարժումն
մէջ բնաւ պահք չառնելու ար-
տօնութիւն տուած է Օրթո-
տոքս հաւատացելոց»:

Այս անճառն մեկնութիւնը
լսող Յոյն ժողովրդեան յուսա-
միտ մասը սրտմտելով՝ եկեղեց-
ւոյն աւարտէն յետոյ հառնա-
պէս յանդիմաներ են Եպիսկո-
պոսն, որ այսպիսի լուսաւոր-
եալ ժամանակ, փոխանակ եր-
կու արեւելեան քոյր եկեղեց-
եաց մէջ սէր և բարեկամու-
թիւն քարոզելու, միջնադար-
եան անտեղի կարծեաց և նա-
խապաշարմանց քարոզ կ'հան-
դիմանար: Յիշեալ աղնուախոհ
անձինքն՝ այսպիսի բաւական
չհամարելով, իրենց Պատրիար-
քարանին տեղեկագրեր են ե-
պիսկոպոսին անպատեհ վար-
մանքը, և Ս. Պատրիարքն ալ
զայն պատմելու համար առ-
ժամանակ մը դադարեցներ է
հոգն որ պաշտօնէ:

Այս վերջին տնօրէնութեան
համար, եթէ ստույգ է, յանուն
Հայ ազգին շնորհակալութիւն
կ'յայտենմք Յունաց Ամեն Ս.
Պատրիարքին»:

Սրուանձտեանց Գեր. Գա-
րեգին վարդապետ դրաւոր ա-
ռաջարկութիւն մը ներկայացու-
ցեր է խառն ժողովին:

Գարեգին վարդապետ Բ.
Դրան կողմանէ զրկուելիք գո-
միսիօնին պաշտօնը նկատողու-
թեան առնելով, կ'առաջարկէ
վարչութեան կողմանէ ազդու
ընթերցանականներ զրկել բոլոր
Առաջնորդաց, որպէս զի անմե-
ղին, աղքատին, զրկելոյն և ան-
կարողին իրաւունքները անհր-
կիւղ և անվեհեր պաշտպանեն,
ապա թէ ոչ պատասխանատու
մնան առաջի վարչութեան Այս
տաթիւ կ'առաջարկէ որ խել մը
գաւառներ ինչպէս են Հայէպ,
Ամասիա, Բալու և ին. առաջ-
նորդներ հաստատուին, խաբ-
բերդի Առաջնորդին օգնական
մը տրուի և ուրիշ գաւառներ
ինչպէս են Դերբան, Բիլի, Սը-
ղէթ և ին. կարող և գործունե-
եայ Առաջնորդական տեղա-
պահներ կարգուին:

Խառն ժողովը սոյն օգտա-
կար առաջարկութիւնը նկատա-
ղութեան առնելու ժամանակ չէ
ունեցեր սակայն:

Ընդհ. Ժողովն իր երէկուան
նիստն ալ գրեթէ ամբողջ Պատ-
րիարքին հրաժարականին խըն-
դրոյն զոհեց:

Ն. Սրբաղնութիւնն արդէն
նախորդ օրն խառն ժողովոյ
կողմանէ իրեն ներկայացուող պատ-
գաւաւորութեանը բացէ ի բաց
յայտենք էր իր հաստատ որո-
շումը թէ՝ մինչև որ իր հրա-

ժարման պատճառներն չ'որո-
շուին, այսինքն մինչև որ Հա-
յաստանի բարեկարգութեանը չ'ը-
րածագրուին, անկարելի է ի-
րեն համար հրաժարականը հո-
տնուիլ և պատրիարքութիւնը
շարունակել:

Այս յայտարարութեան վր-
այ՝ պատգամաւորութիւնը եր-
կու առաջարկութիւն ենթար-
կած էր Ն. Սրբաղնութեան, մէ-
կը՝ Դրան հետ ըլլալիք յարա-
բերութեանց գրութիւնները
թողուլ որ վարչութիւնն ստա-
րագրէ, միւսն ալ՝ Պատրիարքին
տեղ փոխանորդ մ'ընտրուի՝ որ
պատրիարքին պաշտօնը շարու-
նակէ վարել:

Ս. Պատրիարքը այս մասին
պատգամաւորութեան որոշ պա-
տասխան մը չտալով, իր կամքն
ու կարծիքը յատուկ նամակաւ
մը յայտնէր էր առ Դիւանն
բնդհ. ժողովոյ, յորում աղքե-
լով իր հրաժարականին վրայ
իր տեղը ուրիշ մէկն ընտրել կը
յանձնարարէր:

Սոյն գրութեան վրայ խոր-
հրդական սրբաղանք եւ, օր
կրկին յատուկ նամակաւ զե-
րեսփոխաններն երէկուան տե-
ղի ունեւալիք նիստին կ'հրա-
ւիրէր թախանձառօք անպատ-
ճառ ներկայ գտնուելու:

Ժողովը Պատրիարքին սոյն
գրութիւնը նկատողութեան առ-
նելով երէկ, յետ երկար վի-
ճարանութեան, մեծագոյն մա-
սամբ որոշեց Ս. Պատրիարքին
տեղ փոխանորդ մը կարգել ե-
պիսկոպոսական աստիճանաւ ե-
կեղեցական մը, որ բաց ի այն
էպիսկոպոսէն՝ զորս Ս. Պատ-
րիարք ինքը անձառօք տեսնե-
լու հօրկ կ'գտաւ, պատրիար-
քական բոլոր միւս պաշտօններն
ալ վարէ, որք են վարչու-
թեան ժողովոց նախագահել,
բնդհ. ժողով գումարել, առաջ
նորդաց հետ յարաբերութեան
մտնել, Դրան զրկուելիք թագ-
րիւններն և այլ գրութիւններն
կնքել ին:

Ասկից զատ որոշեց նաև ցի-
դէմ՝ քուէով որ յիշեալ պատ-
րիարքական փոխանորդը ուղ-
ղակի ընդհ. ժողովէն ընտրուի
և ոչ թէ վարչութեանէն:

Իսկ քանզի Դրան հետ յա-
բերութեան մտնելու և ստորա-
գրութիւնը պաշտօնապէս ճանչ-
ցուելու համար՝ յիշեալ փոխա-
նորդին Բ. Դրնէն ալ հաստա-
տութիւնն ու ճանաչումը հարկ
էր, առանց որոյ զրկուած զը-
րութիւններն առ ոչինչ կ'համա-
րուէին, սոյն հաստատութիւնը
Բ. Դրնէն խնդրելու կերպին ու
եղանակին վրայ ընդհ. ժողովը
իր մէջ չկարենալով համաձայնի
առանց որոշման ցրուեցաւ, այդ
կեան ալ յաջորդ նստին մէջ

լուծելու համար, որ պիտի գու-
մարուի բոս ոմանց 8 և բոս ո-
մանց 13 օրէն :

Մայրաքաղաքս գտնուող
Սեփաստացի ազգայնոցմէ 60ի
չափ անձինք եչ, օր Պատրիար-
քարան երթալով բողոքեր են
կողմէն գիւղի անցից վրայ, Բ-
Դրան հրամանաւք, կուսակալին
կողմէն յիշեալ գիւղը զրկուող
քննիչ յանձնաժողովին բնթա-
ցիցը դէմ որն որ բուն չարա-
գործ Միհր Ալի աւագակապե-
տէն և իւր ընկերները ազատ
թողլով որ արձակ համարձակ
և սպառազէն ուղած տեղերնին
երթան ու շրջին, ընդհակառա-
կէն կողմէն հայ գիւղացիները
հարցաքննութեան (խթինթա-
զի) ենթարկելով կ'ենդէ եղեր,
Միհր Ալի բողոքած բլլալով
կառավարութեան թէ ոչ թէ
ինքը՝ ալ Հայերն իր մարդոց-
մէն 3-4 հոգին զանելով սպան-
ներ են:

23/7 մարտ 1879

... խմբագիր
Դպրոցատարաց — Արեւելեան
ընկերութեան Տնօրէն խորհուր-
դը պատիւ ունի ծանուցանել
թէ որոշած է Հայաստանի քա-
ղաքացիական ամսաթանկերուն նը-
սուիրել (300) օրինակ ընդար-
ձակ աշխարհագրութեան մատ-
եան, գին 1 մէճիտ, աշխա-
տատիրութիւն Պ. Պ. Աղանուր-
եանի ի պէտս զարգացելոց :

Ուստի կ'ենդրենք որ ու-
սումնարանաց հոգաբարձու-
թիւնը ուղղակի և կամ իրենց
աշխարհակ ներկայացուցիչնե-
րուն ձեռք բարեհաճին, ի
գիւրութիւն Տնօրէն խորհրդոյ
բանակցութեան մտնել իրեն
հետ :

Տնօրէն խորհրդոյ սենեակը
Ղալաթիա, Սառնըճը խան,
բաց է ամեն եչ, և յո, երեկոյ
ժամ 10էն ց11 ու կէս :

Հաճեցէք և ին-
ի Դիմաց Տնօրէն խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Յ. Եւսեպի Ս. Տաթևեան

ՀՐԱՆՑ ԱՍՏԱՏՈՒՐ

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Ուսումնասէր հեղինակն այս
գրքուկին մէջ ամփոփած է իւր
գրութենքներն, որք պատանեկան
հասակի մէջ երկնուած, դեռա-
հաս հոգւոյ մը առաջին՝ զգա-
ցունքներն և մտածումներն կը
պարունակեն :

Կ'ծախուի Եէնի-Ճամի Զի-
լինկիլէր ճատատէսի թիւ 2, Ս.
Ղուկասեան Դրատունը և ուրիշ
հայ գրավաճառաց քով, ի գին
75 սանթիմ:

ԱՅԼԵՒԻՍԼԻՔ

Այցեալ շաբթու Ղալա-
թիոյ մաքսատունը պարկերու
15 կանգուն բարձրութեամբ
մէկ դէզը (խտիֆ) վիշելով 8ի
չափ հայ բեռնակիրներ մնացեր
են ներքեւը: Անմիջապէս միւս
բեռնակիրներն օգնութեան հաս-
նելով, քաւորդ ժամու մէջ այն-
քան պարկերն մէկգի առեր և
յաջողեր են տակը մնացող բեռ-
նակիրներն ազատելու, որոնք
բաւական ծանր կերպիւ ճիւղ-
ուած ու փաստուած բլլալով ալ-
ժամ հիւսնդ պառկած և մաք-
սատան ծախիւքը դարմանուե-
լու վրայ են: Վիճակին երթա-
լով կ'աղէկնայ եղեր:

— Խօթուրի նահանգն ընդ-
ամենը 38 աւաններէ կ'աղկա-
նայ եղեր, որոց 16ը միայն
Պարսկաստանի յանձնուելով
մնացեալ 22 աւանը գործեալ
թուրքիոյ մնացել է: Այժմ նոր
սահմանադրութիւն որոշելու հա-
մար յանձնաժողով մը պիտի
կազմուի:

— Լուրնէ մտնելիք օսմ. զօ-
րաց համար բոլոր հարկ եղած
մթերքն ինչպէս նաև շարժա-
կան հիւանդանոցներն և իրենց
պիտոյքներն պատրաստուելով,
եչ, որ առկէ Զօրլու զրկուել են
երկաթուղիով:

— Այցեալներն Ատանայի ալ-
ևայլ ազգէ բնակչաց մէկ քա-
նիին ստորագրութեամբ բողո-
քոյ հեռագիր մը քաշուած էր
Բ.Դուռը՝ Ատանայի կուսակալ
Զիա բաշային դէմ: Այժմ գոր-
ծեալ Ատանայի բնակիչներէն ու-
մանց ստորագրութեամբ եւ
ստորագրութեանց մեծ մասն
ալ հաւաքել բլլալով, փետր. 21
թուականաւ դարձեալ Բ.Դուռն
քաշուած երկրորդ հեռագիր
մը՝ առաջնոյն դէմ՝ կ'որոգէ և
ղայն անիբաւ հոչակելով ու գա-
նոնք ստորագրողներուն իրեւ
չարախօս պատժուելին ինչ-
րեւով: Զիա բաշան կ'պաշտպանէ:
— Եւրոպական թերթերը կը
հաւաստեն թէ՛ Կ. Պօլսոյ գեր-
մանական նախկին դեսպան
Բայս իշխանը հաւանութիւնը
տուեր է Ռուսիոյ կառավարու-
թեան, Պալկարիոյ իշխանական
աթոռն բնդուենելու, և Բ.Դրան
ալ կ'ամբն հարցուելով, սա ևս
այս մասին իր հաճութիւնը
յայտնեց է եղեր:

ՀՆՈՒԱԳՐԱԼՈՒՐՔ

Բէշթա 6 մարտ
Աւստր. երեսփ. յանձնախմբ:
բին մէջ, Աւստրալի կոմս Պոս-
նայի վարչական գործոց վերա-
բերեալ իրաւասութեանը ինք-
բոյն վրայ խօսելով, բոաւ թէ
Աւստր. և Հունգր. կառավարու-
թիւնը համաձայնած են առա-

ջարկել օրէնսդիր ժողովոց՝ Պոս-
նայի և Հէրսէքի նկատմամբ
դեռ առ կախ մնացած խնդիր-
ները լուծելու:

Այս առաջը հասած

Կալկաթա 7. — Շիր Ալի խա-
նի մահուանէն յետոյ, Աֆղանիս-
տանի մէջ արեւմտահեղ յեղա-
փոխութիւն մը ծագելով, Եա-
գուպ խանի կողմը վրայ ելեր
է:

Լսուած զրոյցներուն նայե-
լով, Անգղիոյ և Աֆղանիստանի
մէջ հաշտութիւնը կնքուեր է
եղեր:

Լանտա 7. — Թայմը կ'ը-
նուցանէ թէ Արեւմտեան տէ-
րութիւնը յայտնեց են Բ.Դրան
թէ իրենք պիտի պնդեն որ
Պալքաններն օսմ. զօրքով գրաւ-
ուի, և եթէ հարկ լինի՝ օսմ.
զօրքերն ալ կ'որհնան Արեւել-
եան Բուլղարի մէջ մտնել:

Բարիզ 7. — Խորհրդարանին
քննիչ յանձնաժողովը, պաշտօ-
նութեան կարծեացը հակա-
ռակ, կ'պնդէ առաջարկել որ
մայիս 16ի պաշտօնէութիւնը
դատի առկ ձգուի:

Նաբօլի 7. — Թագաւորին գէմ
դաւաճանող Բասանթիէն ա-
նուն անձը մահուան դատա-
պարտուեցաւ:

Մատրիտ 7. — Նոր պաշտօնէ-
ութիւնը կազմուեցաւ Մարթի-
նէզ-Քամրոզ զօրապետին զա-
հերէցութեամբ:

Ալէքս. 7. — Բացէ ի բաց կը
հերքուի հոս այն լուրը թէ 500
հելլէնաց հրոս մը թեաւ իրոյ
սահմանադրութեան անցնելով Գա-
թիոյ իշխանութեան օսմ. գիւղն արած
բլլալ, որ սակայն մէկ տաճիկ
չկայ:

Նմանապէս այն լուրն ալ
սուտ է թէ, Մակեդոնիոյ մէջ
եւած խռովութիւններն յոյն ա-
պրատմբաց խմբերէն զընդ-
ուսած լինին:

ԴՐԱՄԱԿԱՆ

Լոնտրա 7. — Բաց 12 1/4
Գոց 12 1/8
Բարիզ 7. — Բաց 12 30
Գոց 12 07 1/2
Պալմար 7. — 12 15

Այս առաւօտ բացուեցաւ 13.12
Թղթադրամ 462.00
Բումբէր 46.75

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Բ.Դուռը երէկ մեծ տէրու-
թեանց շրջաբերական ծանու-
ցադիր մը զրկեց է, որով Յու-
նաստանի սահմանադրացի բողո-
ման խնդիրն դեռ առկա մը.
նալուն պատճառը բացատ-
րելով կրէ թէ՛ Յունաստան
Պէրլինի ֆօնկրէին տաննադրու-
թեանը մէջ գծուած սահմանա-
դիր իրեւ հիմն բռնելով՝ այդ
սահմանադրին համեմատ իրեն

երկիր տրուելուն վրայ կ'պնդէ,
մինչդեռ Օսմ. կայսրութիւնն ալ
բնականաբար ինքզինքը պահ-
պանելու պարտաւոր գտնով եւ
իւր զինուորական ու քաղաքա-
կան շահերը բնաւ ուրիշին զո-
հել չուզելով, այս պատճառաւ
բաղձաղեալ նպատակին հաս-
նելու հնարը չէ գտնուած:

— Կիմանամք թէ Միւղիւ-
րիւս բաշա երէկ հեռագրեր է
Դրան թէ՛ Անգլ. Խորհրդարա-
նը տրամադիր և յօժար կերեւի
Բ.Դրան Անգղիայէն ուղած եւ-
մտական ֆօմիսէրի մ'ընտրու-
թեան իր հաւանութիւնը տա-
լու:

— Մահաւոր տեղեկութիւն.
ներէ ալ կիմացուի թէ՛ Անգլ-
ղիոյ մէջ օսմ. բոլոր արժէտեալք
Թօքսիլի ծրագրին ընդունուե-
լուն դէմ բողոքոյ հանրագիր
մը մատուցեց են Լորտ Սալիդ-
պըրի:

— Բ. Դուռը Սրպիոյ հետ
թղթատարական պայմանագ-
րութիւն մը կնքելու բանակցու-
թեան մէջ կ'գտնուի եղեր:

— Տէմիթօքայէն կ'գրեն թէ
տեղւոյն պոլիար ժողովուրդը՝
եւ քաշող առաստիկան բանակին
հետ միատեղ երթալով կ'աղ-
թէ եղեր:

— Աղէկստեղրիայէն քաշուած
հեռագիր մը կրէ թէ՛ եգիպ-
տական բանակէն արձակուող զօ-
ւալից անվճար մնացած ամա-
կաններն վճարուիլ սկսեց են:

— Լօպանօֆ իշխանը, որ
թօթլէպէն զօրապետին հետ
տեսնուելու գտցեր էր, եչ, գիւ-
շեր Լաւրնէէն հոս փերագարձեր
և նոյն օրը թօթլէպէն զօրա-
պետն ալ Լաւրնէէն ելեր է, եր-
թալ Խեմիդիոյ, Շիպքա և Բուս-
նուգի գիրքերն աչքէ անցնե-
լու Օսմ. զօրքն ալ միննոյն օրը
Լաւրնէ պիտի մտնէ եղեր:

— Ռուսաց Աղէկստեղր կայս-
րը յառաջիկայ մարտ ամսուն
մէջ Լիվառիա (Դրբըմ) պիտի
իջնէ եղեր հոս անցնելու:

— Լուրնէի յոյն մտաբապօրի-
տը, որ պալկարներէն գանա-
կածուեցաւ, ինքզինքը դարմա-
նելու համար այսօր կամ վաղը
Պօլիս պիտի գայ:

— Բերայի կառապանները՝
ֆաղաքապետութեան կողմէն
գրուած սակագնոյն չհնազան-
դելով, 2 օրէ ի վեր գործա-
դուլ բեր են:

— Պալկարիոյ քուէարկեալ
նոր Սահմանադրութիւնը մամ-
լոյ և գումարմանց կատարեալ
ազատութիւն կ'տայ:

Երթուլիւնը պարտաւորիչ
է, Պալկարիոյ առաջին իշխանը
կրնայ կաթօլիկ կոմրօղ-քական
կրօնքէ բլլալ, իսկ յաջորդ իշ-
խանը անպատճառ Օրթօօքս
բլլալու է:

Զինուորական ծառայութիւն
պարտաւորիչ է ընդհանուրին
համար ալ, կրօնքն ազատ է և
սեէ պաշտօնի մը հասնելու ար-
գելք չկրնար բլլալ, իսկ պաշ-
տօններն սոսկ պալկարաց պի-
տի յանձնուին:

ԱՂԴ

ԱՐԱՄԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

Ի Խառնակ 15 փետր. 1879

Արամեան ընկերութիւնը պատիւ ունի ուսանողաց Արգոյ և ուսումնասէր ծնողաց և հասարակութեան նախ՝ ծանուցանել որ գիւղիս Արամեան անուն երկամեայ երկսեռ վարժարանը, որն որ Լիւսն էֆէնտի Հաճեալն հովանաւորութեան տակ կը գտնուէր՝ իւր անձնական տկարութեան աղաքաւ այս նուագը ընկերութիւնս փութաց զայն բոլորովն իւր հսկողութեան տակն առնուլ ապագայէն ազգին մեծամեծի և շահաւէտ յոյսեր ակնկալելով, երկրորդ՝ ծանուցանել բոլոր այն գործովագութ՝ ծնողաց որ իւրեանց զաւակունքը բարեհաճին զրկել վերոյիշեալ վարժարանս վստահ բլլալով որ առաջինէն աւելի փայլուն եղանակաւ ընկերութեան կողմանէ թէ՛ զաւակաց բարի դաստիարակութեանը և թէ՛ նոցա մտաւոր զարգացմանը համար ամեն փոյթ և խնամութիւն տաճելէ չպիտի զբւաւցուի :

Աշակերտաց և աշակերտուհեաց թիւն 75է աւելի չը պիտի ըլլայ որոց հինգը բոլոր նպատակի ընկերութեանս ճիւղապէս պիտի դաստիարակեն, իսկ մնացորդ 70ը թոշակաւոր, որք երկու մասի բաժնուած են նախակրթական և ուսումնական որոց պիտի աւանդուին հետեւեալ դասերը :

Հայկաբանութիւն և կրօնագիտութիւն, ազգային և սքրբաղան պատմութիւնը, գաղղիարէն, տաճկերէն և անգղիարէն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, տոմարակալութիւն, հանրահաշիւ, ուրուագրութիւն և գեղագրութիւն :

Ի դիմաց Արամեան ընկերութեան Տնօրէն Ս.Յ. Պարթևյանէն Յ.Ա. Կարապետեան Ա. սարկաւազ 15 փետր. 79 Խառնակ

Տարտանելի ազգային վարժարանին եկեղեցական երգեցողութեան հմուտ և կառավարչութեան վարժ անձի մը պէտք տեսնուելով նոր վարժարանին հոգաբարձութեան կողմէ կ'ծանուցուի ի պաշտօնէն Սոյն պաշտօնին համար գոհացալիչ թոշակ պիտի վճարուի և յանձնառու ուղարկուի պէտք է դիմէ ոսկերի, Գալֆաեան Մկրտիչ Էֆէնտի, Կ. Պոլիս ոսկերչաց շուկա Գալսէրի փողոց թիւ 6-8 :

Իսկիւտարի ճեմարան վարժարանի մասն աղայոց ուսումնարանի համար ընդհանուր դաստիարակ մը պէտք եղած բլլալով, կ'հրաւիրուին սոյն պաշտօնին յանձն առնող դաստիարակը ի Խորհրդարան յիշեալ վարժարանին :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ ԺՕԶԷՑ ՊԱԼԱՍՄՕ ԹԱՐԳԱՆԵՑ

Աղէտանդը Տիւմա գաղղիացի մեծանուն վարդապետին գրչէն ելած սոյն գործին ճոր պնէ վերջին հասարակութեան ի լոյս ընծայուելով Պոլիս հասած է : Այս գեղեցիկ վէպին մէջ ուր Լուի Ժ. Կ. կեանքը վարքն ու վարժանքը նկարագրուած են, հետզհետէ կ'ընկալանաւ Վոլթէն եւ Ռուսո՝ անցեալ դարուն այն երկու մեծ մարդիկը, թագուն գիտութիւնն ինք կ'այտնուին, Մասնաց օթեակները օտարին առջև կ'ընկուին : Ամեն կարգի և հասակի մարդ իւր սիրած նիւթը հոն կ'գտնէ եւնա :

Կը ծախուի Լէնի ճամբ 21 թիւն կ'ընկուի ճամբէս թիւ 3 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով :

Գին 2 ֆրանք 25 սթ.

ԿԻՅԼՕՄ ԹԵԼԼ ՈՂԻՆԵՐԳՈՒԹ. Ի ՀԻՆԴ ԱՐԱՐՍ Թարգմանեաց գաղղիերենէ Սէյյեյ Ա. Կէլուդեան ԱՆԴԱՄ քարտուղարաց գիւղանին Արտաք. գործոց պաշտօնատան որ ի Բ. Դուռն

Շիլլէր գերմանացի հռչակաւոր հեղինակին ընտիր գործերէն մին եղող սոյն ողբերգութիւնը մէկ նոց թղթագրամի կը վաճառուի Վ. Յ. Մարգարեանի գրատունը Մէրճան-Չարլը թիւ 57 և ամեն գրավաճառաց քով :

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԹՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կ'ծախուի Եֆէն-Ճամբ 21 թիւն կ'ընկուի ճամբէս թիւ 3 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով :

Գին 1 ֆրանք

ՇԱՐԳ ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԳԱՆ ՊԵՑԻ

Վսեմ. Վարդան Պէյի գրչէն ելած սոյն ընտիր պատմութիւնը գործին հիմալ թէրճէմանը—Էֆէնտի լրագրոյն մէջ մաս առ մաս կը հրատարակուի, այս անգամ կրկին սրբագրութեամբ թերթ առ թերթ հրատարակուի սկսած է մաքուր ապագրութեամբ, և որուն ութը եւ րեալ բաղկացեալ մէկ թերթը՝ 2 զլ. և տաք թերթերէ բաղկացեալ մէկ մասը 5 զլ. և երեք մասերէ բաղկացեալ մէկ հատորը 5 զլ. կը ծախուի ողջ թղթագրամ : մէկ հատորի համար մայն բաժանորդ կրնայ ընդունուիլ կանխիկ 70 զլ. վճարելով :

Բաժանորդագրութեան տեղն է Լ. Պոլիս Սուլթան համամ Նշան էֆէնտի Գալֆաեանի փողոցը, Բեքայ թաղի թաղի խանութի, Բեքայ Մեծ փողոց ծխալաճառաց խանութները, Թարալ Պոլիս ծխալաճառ և Նորքէաս աղայի խանութը թէ՛ Պոլսոյ և թէ՛ Ղալաթի յոյսրագրավաճառաց քով :

Տէր և հրատարակիչ Միհրան Ս. Քիթապեան :

Հալութիւն ՈՒՐ. 23 փետր. ԸՆԴ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	13.19
Դոց	13.18
Բարձր զին	13.21
Յած զին	13.16
Թղթագրամ բաց	460.20
բարձր	461.20
ցած	459.20
ժամը 11	460.20
Փոխ. 63ի	Ֆր. 076.00
» 65ի	» 078.00
» 69ի	» 076.00
» 73ի	» 072.00
Պանձատումն	23.50
Սօսիէթէ Ժէնէրայ	4.25
Սօսիէթէ Օթօման	3.00
Պանք տը Բօնաթ.	6.15
Վրէտի Ժէնէրայ	5.15
Թրամիլէյ	1.75
Բուժ. Կրկաթուղի	47.75

ԸՆԹԵՐՑ ԴՐԱՄՈՑ (Օ.Տ. 100 տ. 1 Գ.Ն.Վ.)

Անգլ. տակի	109.16
Գաղղ.	87.12
Բօլ	89.22
Բարպօն արծաթ	16.20
» թղթագրամ	09.00
Վրլմից	51.10
Հինգնոց	23.20
Մէթալիք	24.00
Ճերմակ մէճիտ	07.03
Պղինձ	180.00

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ ԳՏԵՈՒԱՄ ՈՒ

ՓԱՆԱՍԵ

Կոչուած ցաւի դեղը բոլորովն բուժանէ ինքն իր թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն՝ կը գործածուի ու բազմաթիւ ցաւեր ու հիւանդութիւններ շուտով կը բժկէ : Ինչպէս որ վարը յիշուած է :

Ամեն տեսակ Գոլի, Ըտամիքսի, մէլքի կամ Եղիքներու ցաւեր ու նաև Թանջը, Բօլքրա և այլ ամառուան հիւանդութիւններ ունեցողները այս դեղէն խմելու են հետեւեալ կերպով : Կէս գաւաթ ջուրի մէջ, զիր ապուրի մը զրգալէն աւելի շաքար, վրան լեցուր անուշիկ զրգալ մը փանստե աղէկ մը խառնէ ու խմէ :

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռնցքի համար զեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ երկու անուշիկ զրգալ այն յաղագրութեան խմէ : Յօդապալի, Բիւմա, թիւմի, Ուրքի ցաւի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կանակի ցաւերու համար դուրսէն փանստէ քաւով աղէ մը շփելու է : Այնպէս ցաւի համար քիչ մը բամպակ փանստէի մէջ թաթխելով ցաւած ակուպին վրայ դնելու է :

Ամեն տեսի երրորդ ցաւի մը համար գուրսէն փանստէ քեւ հարկ կրլւոյ, եթէ քիչ մը ալ խմուի աւելի շուտ բժկուիլ կը լըլոյ :

Մարմնոյ այրուած կամ ճմլուած տեղերը բժկելու համար փոսն զը պատահածին պէս փանստէին վրան աղէկ մը լեցնելու է : Գոտա կով և լին կտրուած վերքերը բժկելու համար՝ տրիւնը շարած շուտով մը վերքը կապելու և քապին վրայէն փանստէ լեցնելու է մինչև որ Լաւ մը

թրջի փանստէն նաև արեան չրջալը նպարգացնէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ :

Այս դեղին օգտակարութեանը վրայ երկարօ էն գրել աւելորդ կը համարվի, գործածողները զայն միշտ կը գողին, ուզողը կրնայ անձամբ փորձել : Գինն աժան է : Կը ծախուի Միհրանեան և Ընկերաց Ամերիկեան վաճառատունը որ ի Ղալաթիա Կ. Պոլսոյ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՎԵՍԱՐԱՑ ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՐԷԿԱՆԵՑ Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբորոց տպարանէն ի լոյս ընծայուելով, կ'ծախուի Եֆէն-Ճամբ 21 թիւն կ'ընկուի ճամբէս թիւ 3 Ս. Ղուկասեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով : Գին 1 ֆրանք 25 սանթիմ :

ԲԱՆԱԼԻ ՀԱՅԵՐԷՆ ԵԱՐԱԿՐՈՒԹԵԱՆ ԳՐԵՑ Կ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ահաւասիկ գեղեցիկ միթոս մը Մամուրեան էֆ. Ե. աշխատասիրութեամբ մուտ գտնելով մայրենի լեզուի ուսման մէջ, կ'առաջնորդէ աշակերտները շարադիր լինելու, չըստպելով որ անոնք քերականութեան տաղտուկ չըլանէն անցնին :

Այս գրքովը Զմիւռնիոյ Տէտէեանց բարց տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Եֆէն-Ճամբ 21 թիւն կ'ընկուի ճամբէս թիւ 3 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով : Գին 50 սանթիմ :

ՆՈՐ ՕՐԱՅՈՑՑ 1879

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ Կ'ծախուի գին 20 փարա մէճիտ

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՑՑ ՊԱՏԻՆԵՐԱՋԱԿ 1879

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ Գին 40 փարա մէճիտ

ՏԳԻՐԱՆԻ ԶԳԻՐԱՆԻ 15 կնիզանաղիր պատկերներով զարդարեալ սոյն ընդամակ օրացոյցը բաց ի բուն օրացոյցէն կ'պարունակէ նաև վերջին Ռուսո—Տանկական պատերազմին համառոտ պատմութեան, տաղաչապահական ամենակարեւոր գիտելիքներ, բարոյական սկզբունք, յեր, խայթման և այլադի դեղեր, քննաստիարակ ճիշդներ ինչեւ կերպեր : Ասոնցմէ զատ ազգային նշանաւոր բնատուրած Գամառ Բաթիպայի «Հայերու թուրք» վերնագրով մէկ շաշխարհիկ ոտանաւոր :

Կ'ծախուի Զարդարեան վաճառատունը, Սուլթան համամ փողոց, Ալլորէֆէնտի խանի դիմաց, թիւ 12 և գրավաճառաց քով :

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԻՍԱՆԱՏՈՒ ՊՕԴՈՍ ՔՐԻՐԵՃԵԱՆ Հալաթիա Բէրէմպէ-Բա. Զար Պաքըր փողոց թիւ 12.